

Կ. Ա. ՓԻՐՈՒԻՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԹ-ի ԽԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՆՁՈՐԵՆՈՒ ՍՈՐՏԵՐԻ
ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ :

Իշեանի շրջանի բնապատմական պայմանները միանգամայն նպաստավոր են խնձորենու սորտերի նորմալ զարգացման և պըտղաբերման համար։ Շրջանի այգիներում տարածված են խնձորենու բազմաթիվ սորտեր, որոնք իրարից տարբերվում են մի շարք առանձնահատկություններով։

1961 թվականից մեր կողմից աշխատանքներ են սկսվել իշեգանի շրջանում՝ նպատակ ունենալով հայտնարերել և ուսումնամիերել խնձորենու տարածված սորտերը, ընտրել լավագույնները, ստանդարտ ասորտիմենտի մեջ մտցնելու համար։

1961—1963 թթ. շրջանում հայտնարերվել և ուսումնասիրվել են խնձորենու 22 սորտեր, որոնցից հինգը ունեն տեղական ժամանակակից անունը։

Ստացիոնար դիտումները և ուսումնասիրությունները տարվել են Ռւզունթալայի և Ռեսազլուի այգիներում ընդունված սխեմայով և մեթոդիկայով։

Սորտերի ֆենոֆազական կարենոր առանձնահատկությունները (կապված տվյալ տեղի հողակիմայական պայմանների հետ) հանդիսանում են նրանց ֆենոֆազերի անցման ժամկետները։

Տարված դիտումները ցույց են տալիս, որ խնձորենու սորտերի վեգետացիան (աղյուսակ 1) սկսվում է մարտի առաջին տասնօրյակում և ավարտվում նոյեմբերի կեսերին։ Ընդհանուր վեգետացիայի տևողությունն ըստ տարիների և սորտերի կազմով է 184—186 (Տիրուկա) օրից մինչև 233—240 (ոնետ Սիմիրենկո) օր։

¹ Աշխատանքները կատարվել են գյուղատնտես, դիտ, թեկնածու, ավագ գիտական աշխատող, գիտության վաստակավոր գործիչ Ա. Մ., Վերմիջանի ղեկավարությմաբ։

Խնձորենու տեղական և ներմուծված սուրբերի ֆենոքագերը 1961—1963 թ.

Սուրբերի անունները	Բողբոջների ուռչելու սկիզբը	Մաղկման սկիզբը	Էֆեկտիվ չերմաս- տիճանների գու- մարը հասունաց- ման սկզբում ¹⁾	Հասունա- ցում	Տերեների գումափո- խում
Տեղական					
Ջմեռնուկ	12/3—15/3	19/4—2/5	2521 — 2584	15/9—15/10	28/10
Իշեանի սպիտակ	8/3—15/3	20/4—4/5	2465 — 2517	10/9—10/10	20/10—31/10
Մոսի	14/3—20/3	20/4—30/4	2404 — 2503	12/9—5/10	25/10—11/11
Կարմիր գուազոս	15/3—18/3	21/4—4/5	2404 — 2517	10/9—5/10	20/10—1/11
Իշեանի քաղցր	15/3—16/6	12/4—28/4	2336 — 2390	30/8—5/9	15/10—20/10
Ներմուծված					
Պապիրովկա	10/3—18/3	3/4—20/4	1291 — 1311	9/7—21/7	12/10—25/10
Բերքլյոր դեղին	12/3—13/3	7/4—22/4	2129 — 2188	21/8—12/9	20/10—28/10
Աստրախանի կարմիր	8/3—13/3	8/4—22/4	1207 — 1227	5/7—17/7	1/10—10/11
Ալատոնովկա առվորական	13/3—15/3	9/4—6/4	1639 — 1685	25/7—14/8	15/10—30/10
Ռենետ Լանզուրեգի	17/3	9/4—25/4	1874 — 1928	9/8—25/8	18/10—5/11
Չելինի	15/3—20/3	9/4—26/4	1487 — 1523	20/7—1/8	20/10—15/11
Բուժովյան զեղեցկունի	12/3—15/3	10/4—25/4	2350 — 2416	5/9—30/9	25/10—10/11
Ռենետ Վեյզների	12/3—15/3	10/4—22/4	2100 — 2174	25/8—15/9	20/10—30/10
Ռոզմարին սպիտակ	16/3—19/3	10/4—28/4	2250 — 2336	30/8—20/9	28/10—5/11
Ռենետ շամպայնի	13/3—15/3	10/4—29/4	2350 — 2372	1/9—30/9	25/10—3/11
Տիրովկա	15/3—27/3	12/4—30/4	2290 — 2354	31/8—25/9	15/9—30/9
Բարուշկինո	14/3—20/3	13/4—28/4	2296 — 2372	1/9—25/9	31/10—8/11
Ռենետ կանադական	16/2—20/3	14/4—1/5	1947 — 1960	10/8—31/8	25/10—5/11
Ռեպկա կապիլովկա	11/3—20/3	15/4—27/4	1124 — 1147	1/7—12/7	20/10—30/10
Ջենային ոսկե պարմեն	12/3—25/3	15/4—1/5	1944 — 2069	15/8—30/8	1/9—15/11
Լուսանկա	16/3—29/3	19/4—3/5	2146 — 2170	20/8—13/9	16/10—30/10
Ռենետ Սիմիրենկո	29/3	20/4—29/4	2250 — 2372	1/9—20/9	1/11—7/11

¹⁾ Էֆեկտիվ չերմաստիճանների գումարն ստանալու համար հաշված են (5° -ից բարձր) օրվա միջին չերմաստիճանները, ընդորում ամեն անգամ միջին չերմաստիճանից հանդած է 5° ։

Աւասմնասիրված սորտերի մեջ համեմատաբար բոլորից շուտ արթնանում են Աստրախանի կարմիր, Պապիրովկա և իշեանի սպիտակ, իսկ ավելի ուշ՝ Լուժանկա, Ռենետ կանադական, Ռենետ Միմիրենկո սորտերի բողբոչները:

Բողբոչների ուղելու շրջանից մինչև ծաղկման սկիզբը, ըստ սորտերի կազմում է 24—37 օր:

Ելնելով սորտերի ծաղկման բնույթից, նրանց կարելի է բաժանել երեք խմբի.

1. Վաղ ծաղկողներ. ծաղկման համար պահանջում են ըստ տարիների $122^{\circ}-173^{\circ}$ էֆեկտիվ ջերմաստիճանների գումար: Դրանցից են Պապիրովկա, Բելֆլոր դեղին, Աստրախանի կարմիր, Անտոնովկա սովորական, Ռենետ Լանդսբերգի, Զելինի, ծաղկումը տևում է 9—13 օր.

2. Միջին ծաղկողներ. դրանցից են Բուկոպյան գերեցկուհի, Ռենետ Վեյդների, Ռենետ շամպայնի, իշեանի քաղցր, Բարուշ-կին, Ռենետ կանադական սորտերը. ծաղկման համար պահանջվում է ըստ տարիների $149-219^{\circ}$ էֆեկտիվ ջերմաստիճանների գումար, ծաղկումը տևում է 8—12 օր:

3. Ուշ ծաղկողներ. ծաղկման համար պահանջվում է ըստ տարիների $187-244^{\circ}$ էֆեկտիվ ջերմաստիճանների գումար: Դրանցից են՝ Ռենետա Կապիլովա, Զմեռուային ոսկե պարմեն, Զմեռուուկ, Լուժանկա, իշեանի սպիտակ, Սոսի, Ռենետ Միմիրենկո, Կարմիր զոլավոր, ծաղկումը տևում է 9—11 օր:

Ինչպես երևում է տվյալներից, տեղական սորտերը հիմնառ կանում ուշ ծաղկողներ են:

Խնձորենու սորտերի սպառումը սկսվում է հունիսի երկրորդ տասնօրյակից (Աստրախանի կարմիր) և տևում է մինչև հաջորդ տարվա մայիսի վերջերը (Սոսի), ըստ որի նրանց կարելի է բաժանել.

Ամառային. Աստրախանի կարմիր, Ռենետ Կապիլովա, Պապիրովկա, Վնատոնովկա սովորական: Աշնանային՝ Ռենետ լանդսբերգի, Զելինի: Ուշ աշնանային՝ Ռենետ կանադական, Լուժանկա, իշեանի քաղցր, Բարուշ-կինու: Զմեռուային՝ Ռուզմարին սպիտակ, Բելֆլոր դեղին, Կարմիր զոլավոր, Բուկոպյան գերեցկուհի, Ռենետ Վեյդների, Տիրուկա և ուշ ձմեռուային՝ Ռենետ Միմիրենկո, Ռենետ շամպայնի, իշեանի սպիտակ, Զմեռուուկ, Սոսի: Բոլոր սորտերն իրենց հասունացման համար պահանջում են, ըստ տարիների, $1207^{\circ}-2584^{\circ}$ էֆեկտիվ ջերմաստիճանների գումար:

Սորտերի բերքատվությունը: Սորտերի բերքա-

տվության հաջվառումների համար, ըստ տարիների, յուրաքանչյուր սորտից առաձնացրել ենք մինչև 5-ական ծառ և նրանց վրա որոշել ծաղկման աստիճանն ու բերքատվությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնձորենու սորտերի ծաղկման աստիճանը (աղջուսակ 2) երեք տարվա ընթացքում համեմատաբար բարձր է տեղական սորտերի մոտ:

Փաստացի բերքը երեք տարվա միջին տվյալներով տատանվում է 19 կգ-ից (*Տիրուկա*) մինչև 570 կգ. (*Սոսի*): Իսկ տնտեսության և հասակի հետ կապված սորտերի միջին բերքատվությունը հետևյալն է՝ 60—130 տարեկան տեղական սորտերի ծառերից Ուզութալայի տնտեսության պայմաններում ստացվել է 66,6 կգ-ից (*Խենանի սպիտակ*), մինչև 570 կգ (*Սոսի*) միջին բերք: 28—30 տարեկան ներմուծված սորտերի ծառերից նույն տնտեսության պայմաններում՝ 41,0 (*Ռենետ լանդսբերգի*), 82,0 կգ (*Ռենետ շամպայնի*) և աղջն:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ սորտերի ծաղկման աստիճանը և բերքատվությունը իրար հետ գտնվում են որոշակի կապի մեջ, այն է, որքան սորտի ծաղկման աստիճանը մեծ է, այնքան նրա բերքատվությունը բարձր է և հակառակը: Դա պարզ երևում է Ռենազուի տնտեսությունում աճող սորտերի մոտ. օրինակ՝ Լուժանկա սորտի ծաղկման աստիճանն ըստ տարիների եզել է 5—2—4 բալ, իսկ բերքատվությունը կազմել է հաջորդաբար 120—18—105 կգ և աղջն:

Ուզութալայի տնտեսությունում այդ օրինաշափությունը չի երևում, որպէսն 1963 թ. վեգետացիայի ընթացքում, ինչպես և ւզութալայի, այնպես էլ շրջանի մի շարք տնտեսությունների այգիները մի քանի անգամ ենթարկվել են ուժեղ կարկտահարության: Ասկայն եթե ուսումնասիրենք 1961 և 1962 թթ. տվյալները, ապա կտեսնենք, որ այնաեղ ես նկատվում է այդ օրինաշափությունը:

Պտղաբերության պարբերականությունը տեղական սորտերի մոտ շատ թույլ է արտահայտված, իսկ ներմուծված սորտերի մոտ՝ համեմատաբար ուժեղ:

Այսպիսով, տեղական սորտերը շրջանի պայմաններում շատ բարձր բերքատու են, որը հաստատում է Ա. Մ. Վերմիշյանի (1947), Ա. Ե. Մարգարյանի (1960) և այլ հետազոտողների այն դրույթը, որ տեղական սորտերը հարմարված լինելով տվյալ հողակլիմայական պայմաններին, ավելի երկարակյաց են և բարձր բերքատու:

Ներմուծված սորտերից բարձր բերքատու են Ռենետ շամպայնի, Ռենետ կանադական, Լուժանկա, Բուկոպյան գեղեցկուհի,

Մարմերի բերքատվարյան միջին տվյալները 1961—1963 թթ.

Սուբտերի անունները	Ծնառառ-բյան անունը	Մասի առթիւզը	Մաղկման աստի- ճանը բալլերով			Մեկ ծառի միջին բերքը կգ-ով		
			1961	1962	1963	1961	1962	1963
Ցեղական								
Չժեռնուկ		Ուղունթալա	100—130	5	5	4	200	31
Սոսի	»	100—120	5	5	3	350	1360	0
Իջևանի սպիտակ	»	60—80	3	5	4	60	140	0
Իջևանի քաղցր	»	60—80	5	3	5	188	25	0
Կարմիր դուշվոր	»	60—80	5	4	5	230	190	0
Ներմուծված								
Ռենհոտ շամպայնի	»	28—30	5	3	5	164	80	4
Ռենհոտ կանադական	»	»	5	3	4	175	60	9
Ռոզմարին սպիտակ	»	»	3	4	3	28	125	5
Ռենհոտ լանդոբերդի	»	»	4	3	3	55	48	20
Աստրախանի կարմիր	»	»	5	5	3	45	152	15
Լուժանկա	Բնագլու	»	5	2	4	120	18	105
Բուկոպյան գեղեցկունի	»	»	3	4	4	19	50	150
Չժեռային ոսկե պարմեն	»	»	3	3	3	17	25	22
Բարուշկինս	»	»	3	4	4	20	35	79
Ռենհոտ Վեյդների	»	»	3	4	4	50	40	98
Ռենհոտ Միմիբենկո	Ուղունթալա	15—16	2	4	3	5	106	14
Բելֆլոյր գեղին	»	»	2	5	3	13	80	32
Չելինի	»	»	3	4	4	15	135	10
Անտոնովյան սովորական	»	»	5	3	3	48	56	20
Ռեպկա Կապիլովա	»	»	4	4	3	55	61	35
Պապիրովյան	Բնագլու	»	4	4	3	40	65	0
Տիբուկա	»	»	3	3	3	11	39	7

Աւտրախանի կարմիր, Ռենետ Վեյդների, Ռենետ Սիմիրենկո, Բել-
ֆլյոր դեղին, Զելինի, Անտոնովկա սովորական սորտերը, իսկ
մյուսները համարվում են ցածր բերքատու:

Սորտերի վարակվածությունը հիշանդու-
թյուններով և վնասատուներով: Սորտերի դիմաց-
կունությունը հիվանդությունների և վնասատուների նկատմամբ
շատ մեծ նշանակություն ունի:

Ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից խնձորենու
տնկարկներում հիվանդություններից արձանագրվել են քոս, ժանգ,
պտղային փտում, ալրացող, և քաղցկեղ, իսկ վնասատուներից՝
բրդապատ լվիճ, խնձորենու ծաղկակեր, խնձորենու պտղամեր և
խնձորենու ցեց:

Տարբեր սորտեր հիվանդություններով և վնասատուներով
միատեսակ չեն վարակվում (աղյուսակ 3):

Սորտերի հիվանդություններով վարակվածությունը բաժան-
վում է երեք խմբի.

1. Թույլ վարակվողներ՝ Ռեպկա Կապիլովա, Աստրախանի
հարմիր, Պապիրովկա, Անտոնովկա սովորական, Ռենետ Վեյդնե-
րի, Ռենետ կանադական, Լուժանկա, Տիրոլկա և տեղական բոլոր
սորտերը:

2. Միջակ վարակվողներ՝ Զելինի, Թուկոպյան գեղեցկունի,
Բելֆլյոր դեղին, Ռենետ լանդսբերգի, Ռոզմարին սպիտակ, Ռենետ
շամպայնի, Բարուշկինո:

3. Ուժեղ վարակվողներ՝ Ռենետ Սիմիրենկո, Զմեռային ոսկե
պարմեն: Իսկ բայց վնասատուներով վարակվածության աստիճանի
նշունքն կարելի է բաժանել երեք խմբի.

1. Թույլ վարակվողներ՝ Ռեպկա Կապիլովա, Աստրախանի
հարմիր, Ռենետ կանադական, Լուժանկա, Տիրոլկա և տեղական
բոլոր սորտերը:

2. Միջակ վարակվողներ՝ Անտոնովկա սովորական, Զելինի,
Թուկոպյան գեղեցկունի, Ռենետ Վեյդների:

3. Ուժեղ վարակվողներ՝ Պապիրովկա, Բելֆլյոր դեղին, Ռե-
նետ լանդսբերգի, Ռենետ Սիմիրենկո, Ռոզմարին սպիտակ, Ռենետ
շամպայնի, Բարուշկինո, Զմեռային ոսկե պարմեն:

Այս խմբավորումները, իհարկե, պայմանական են, քանի որ
որոշ գեղքերում միևնույն սորտն ուժեղ վարակվում է մի հիվան-
դությունով կամ վնասատուով և բոլորովին զերծ է այլ հիվանդու-
թյունից կամ վնասատուից: Օրինակ, Թուկոպյան գեղեցկունի, Ռե-
նետ կանադական և այլն:

Առարկերի անունները	Հիվանդությունների և վնասատոնների տեսակային էպիմը և վարակվածության աստիճանը						Ց ց ց
	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	Հ ա զ ի ո ւ թ ա շ ա ն ե ր ք	
Ներմուծված							
Ուղղված կապիլովա	+						++0+
Աստրախանի կարմիր							+0+
Պապիրովիկա							++
Անտոնովկա սովորական							++
Չելինի							++
Բուկոպյան գեղեցկունի	++						++
Բիլֆլյոր գեղեցն	++						++
Ռենետ լանդսբերդի	++						++
Ռենետ կերդների	++						++
Ռենետ Միլիբենկո	++						++
Ռոզմարին սպիտակ	++						++
Ռենետ կանադական	++						++
Ռենետ շամպայնի	++						++
Լուժանկա	++						++
Զմեռային ոսկե Պարմեն	++						++
Բարուշկինոն	++						++
Տիրուկա	++						++
Տեղական							
Սոսի							0
Զմեռնուկ							0
Իշևանի սպիտակ							0
Իշևանի քաղցր							0
Կարմիր գոլավոր							0
Պայմանական նշանները. 0 — առողջ + — բույլ վարակող, ++ — միջակ վարակող, +++ — ուժեղ վարակող:							

ինչպես երեսում է բերված տվյալների խմբավորումներից, սորտերից և ոչ մեկը բացարձակ դիմացկում չի տարածված հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Ինչպես վնասատուներով, այնպես էլ հիվանդություններով համեմատաբար թույլ են վարակվում ներմուծված Ռեպկա Կապիլովա, Աստրախանի կարմիր, Ռենետ կանադական, Լուժանկա, Տիրողվա և տեղական բոլոր սորտերը, իսկ մյուսները՝ միջակ և ուժեղ վարակվողներ են:

Այսպիսով, մեր ուսումնասիրություններից նույնպես պարզվում է, որ խնձորենու տեղական սորտերը, ներմուծված սորտերի հետ համեմատած, ավելի գիմացկուն են հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Սորտերի որակական ցուցանիշների ուսումնասիրությունները տարվել են երկու մեթոդով՝ քիմիական և օրգանոլեպտիկ:

Պարզվել է, որ չոր նյութերի քանակությունը (աղյուսակ 4) տառանվում է 11,57%-ից (Φ ապիրովկա) մինչև 18,90% (β ոսկոպյան գեղեցկունի), ընդ որում տեղական սորտերը չոր նյութերի պարունակությամբ ետք չեն մնում ներմուծված սորտերից: Գեռ ավելին, նրանք գերազանցում են ներմուծված այնպիսի սորտերի չոր նյութերի պարունակությանը, ինչպիսին են Φ ապիրովկա, Անտոնովկա սովորական, Ռենետ լանդսբերգի և այլն: Ընդհանուր շաքարները տատանվում են 7,920%-ից (\mathcal{A} նտոնովկա սովորական) մինչև 13,430% (β ոսկոպյան գեղեցկունի), իսկ ընդհանրապես տեղական սորտերի շաքարների ընդհանուր քանակը համեմատաբար բարձր է ներմուծված սորտերի շաքարների ընդհանուր քանակից: Սակայն պետք է նշել, որ խնձորենու տեղական սորտերի պտղամիսը համեմատաբար կոպիտ է: Սորտերը պարունակում են 0,1 (\mathcal{A} սոսի)–1,15 (\mathcal{A} նտոնովկա սովորական) տոկոս տիտրվող թթուներ: Ընդհանրապես տեղական սորտերը թթուների պարունակությամբ ետք են մնում ներմուծված սորտերից, որը և հանդիսանում է նրանց հիմնական թերություններից մեկը, բացառությամբ Կարմիր զոլավոր սորտից, որը պարունակում է 0,860% տիտրվող թթու: Ներկանյութերի և գերազանցութերի գումարը տեղական և ներմուծված սորտերի մոտ գրեթե հավասար է և տատանվում է 0,05–(Զմեռնուկ) – 0,5 (β ելֆլոր գեղին) տոկոսի սահմաններում:

Եթե իջևանի շրջանի պայմաններում աճող խնձորենու սորտերի քիմիական կաղմը համեմատենք Ω րիմում աճող նույն սորտերի

Խնձօրենու սորտերի բիմիական կազմի և համային ցուցանիշների
միջին տվյալները (1961—1963 թթ.)

Սուբստիքի անունները	Զոլ նյութերի քանակություն Բյուջե տպագություն	Շաքարների քանակություն Բյուջե տպագություն	Տիտարուղի անձնություն քանակություն	Ներկանյութերի գումարական պահանջանք	Մորտերի համախռություն ընդունություն
Դոկտորին սպիտակ	13,56	10,59	0,28	0,07	—
Ուկնեա շամպայնի	14,66	9,94	0,60	—	—
Ուկնեա Սիմիրենկո	14,68	9,11	0,54	—	—
Տեղական					
Կարմիր գուազոր	16,10	11,01	0,86	0,166	3,0
Իջևանի քաղցր	15,04	11,23	0,18	—	3,3
Չեռնուկ	14,44	10,90	0,18	0,05	3,0
Ասմի	12,91	10,68	0,10	0,108	3,0
Իջևանի սպիտակ	—	—	—	—	4,0
Ներմուծված					
Բուկուլյան գեղեցկուհի	18,90	13,43	0,45	0,166	4,2
Ուկնեա վերների	17,10	9,91	0,52	0,214	4,5
Ուկնեա կանաչական	17,00	12,33	0,27	0,133	4,0
Չմեռային ոսկե պարմեն	17,00	13,10	0,24	—	4,0
Ուկնեա շամպայնի	14,82	10,04	0,50	0,183	3,5
Բարոն շինու	14,52	10,68	0,83	0,249	3,5
Լուժանկա	14,37	9,80	0,24	0,216	4,0
Ուկնեա Սիմիրենկո	14,22	10,23	0,53	0,166	4,4
Տիրուկա	14,22	10,48	0,50	0,133	3,0
Դոկտորին սպիտակ	13,93	9,91	0,32	0,191	3,0
Բելֆլոր գեղեն	13,84	11,02	0,29	0,50	3,6
Չեռնինի	13,14	10,02	0,32	—	4,0
Աստրախանի կարմիր	12,97	9,58	0,62	0,141	3,7
Անտոնովիկա սովորական	12,61	7,92	1,15	0,224	3,6
Ուկնեա կապիլովա	12,17	9,80	0,40	0,083	3,3
Ուկնեա լանցուրեզի	12,07	9,91	0,32	0,083	4,3
Պատիրովիկա	11,57	10,02	0,62	0,191	3,5

բիմիական կազմի հետ, ապա պարզվում է, որ նրանց մեջ այնքան էլ մեծ տարրերություններ չկան:

Պաղատու կուլտուրաների սելեկցիայի և սորտառասումնասիր-ման բաժնում կազմակերպվել են համտեսներ:

Աւումնասիրված սորտերից չորս և բարձր գնահատական են ստացել 9-ը, երեքից բարձր՝ 8, իսկ մնացած 5 սորտերը բավարար գնահատական:

Այսպիսով, շրջանում տարածված խնձորենու սորտերի մեծ մասը ընդհանուր համտեսի ժամանակ ստացել են երեքից բարձր գնահատական: Մյուս սորտերի բավարար գնահատական ստանալը բացատրվում է նրանց պտղամսի կոպտությամբ և համեմատաբար ցածր ցածր թթվությամբ:

ԽԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իշեանի շրջանի բնապատմական պայմանները միանգամայն նպաստավոր են խնձորենու սորտերի նորմալ ծաղկման և պտղաբերման համար:

2. Երեք տարվա միջին տվյալներով վատ են պտղաբերում Ձմեռային ոսկե պարմեն, Տիրոլկա, Բարուշինո և Ռոզմարին սպիտակ սորտերը:

3. Շրջանի պայմաններում սորտերն իրենց բիմիական կազմով ետ շեն մնում Ղրիմում աճեցված խնձորենու նույն սորտերից:

4. Ընդհանուր համտեսի ժամանակ բավարար գնահատական են ստացել ներմուծված Տիրոլկա և տեղական կարմիր զոլավոր Զմեռնուկ, Սոսի սորտերը, որոնց պտղամիսը համեմատաբար կոպիտ է և ունեն ցածր թթվություն, իսկ Ռոզմարին սպիտակը ուժեղ վարակվում է հիվանդություններով և վնասատուններով:

5. Ենելով վերը նշվածներից, կարելի է շրջանում տարածել հետևյալ սորտերը. Ամառային՝ Աստրախանի կարմիր, Պապիրովկա: Աշնանային՝ Լուժանկա, Չելինի, ունետ լանդսբերգի, Ռենետ կանադական: Զմեռային՝ Բելֆլյոր դեղին, Բուկոպյան գեղեցկուհի, Ռենետ շամպայնի, ունետ Վեցդների և տեղական իշեանի սպիտակի:

6. Որպես բարձր բերքատու և հիվանդություններին ու լնաւսատուններին համեմատաբար դիմացկուն, տեղական իշեանի բաղցր, Սոսի, Զմեռնուկ և կարմիր զոլավոր սորտերը տարածել

տնամերձերում և անտառ-ալգիներում, որպես տեղական նշանակություն ունեցող սորտեր:

7. Որպես շրջանի պայմաններին համապատասխանող, ցածր բերքատու, հիվանդություններին ու վնասատուներին թույլ դիմացկուն շրջանում այլևս չտարածել ունետ Սիմիրենկո, Ռոզմարին սպիտակ, Ռեպկա կապիլովա, Տիրոլկա, Զմեռային ոսկե պարմեն և Բարուշկինո սորտերը:

К. А. ПИРУМЯН

НЕКОТОРЫЕ БИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СОРТОВ ЯБЛОНИ ИДЖЕВАНСКОГО РАЙОНА АРМЯНСКОЙ ССР

Резюме

Климат Иджеванского района вполне благоприятен для культуры яблони.

В районе с 1961 г. проводились исследования по выявлению ассортимента яблони с целью установления распространенных сортов, отобрав среди них наилучшие для введения в стандартный сортимент.

На протяжении 1961—1963 гг. нами выявлено и исследовано 22 сорта яблонь, пять из них—местного происхождения. Исследования проводились в садах селения Узунтала и Ревазлу по принятой методике. В основном изучены фенофазы, урожайность, заражаемость болезнями и вредителями и качественные признаки сортов.

Наблюдения показали, что исследуемые сорта свою вегетацию начали в первую декаду марта и закончили в середине ноября. Вегетационный период по сортам длится от 184—186 (Тиролька) до 233—240 (Ренет Симиренко) дней.

Исходя из характера цветения сортов, их можно разделить на 3 группы: раннего, среднего и позднего цветения.

Наблюдается, что местные сорта в основном являются поздноцветущими.

Сроки потребительской зрелости сортов яблони начи-

наются со второй декады июля (Астраханское красное) до конца мая следующего года (Соси), исходя из которых их можно разделить: летние, осенние, поздно-осенние, зимние и поздне-зимние.

В условиях Иджеванского района высокоурожайными сортами являются Ренет шампанский, Ренет канадский, Лужанка, Боскопская красавица, Астраханское красное, Ренет Вейднера, Ренет Симиренко, Бельфлер желтый, Челлини, Антоновка обыкновенная и все местные сорта. Кроме этого, наблюдается определенная связь между цветением и урожайностью, т. е. поскольку выше степень цветения, постолько выше и урожайность и наоборот. Например, сорт Лужанка в садах Ревазлу имеет по годам 5—2—4 баллов цветения, а урожайность его составила последовательно 120—18—105 кг и т. д.

В насаждениях яблонь из болезней были обнаружены парша, ржавчина, плодовая гниль, мучнистая роса, черный рак, а из вредителей—кровяная тля, цветоед яблони, плодожорка яблони и яблоневая моль, которыми сравнительно слабо заражаются Репка Копылова, Астраханское красное, Ренет канадский, Лужанка, Тиролька и все местные сорта.

Плоды яблони Иджеванского района по своему химическому составу не уступают тем же сортам Крыма. Во время общей дегустации хорошую оценку получили 9 сортов; 8—выше удовлетворительной, а остальные 5 сортов—удовлетворительную оценку.

ВЫВОДЫ

1. Естественно-исторические условия Иджеванского района вполне благоприятны для нормального цветения и плодоношения сортов яблони.

2. По средним данным трех лет плохо плодоносят следующие сорта: Пармен зимний золотой, Тиролька, Бабушкино и Розмарин белый.

3. В результате исследования для внедрения в производство и для приусадебных хозяйств рекомендуются следующие: летние—Астраханское красное, Папировка,. Осенние—Лу-

жанка, Челлини, Ренет ландсберга, Ренет канадский. Зимние — Бельфлер желтый, Боскопская красавица, Ренет шампанский, Ренет Вейднера и местный.—Иджевансое белое.

4. Сорта Ренет Симиренко, Розмарин белый, Репка Копылова, Тиролька, Пармен зимний золотой и Бабушкино, как не соответствующие условиям района, не рекомендуется размножать.

5. Местные сорта—Иджевансое сладкое, Соси, Дзмернук и Кармир золовор, как урожайные и сравнительно устойчивые к вредителям и болезням, надо распространить в приусадебных хозяйствах и в лесо-садах, как сорта местного значения.

